№ 103 ՅՈՒՆԻՍԻ 23 (ՅՈՒԼԻՍԻ 5) 1878 ՅՈՒՆԻՍԻ 23 (ՅՈՒԼԻՍԻ 5) № 103

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ., կէս տարվանը 6 րուբլ:

—

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

—

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

—

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

—

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ասիական լեզուների ապագան: — Ներքին տեսութիւն. Նամակ Ախալքալաքից: Նամակ Շուշուց: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Հրէաների հարցը. Իտալիա: Արտաքին լուրեր: — «Մշակի» հեռագիրները: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրական: Մանկական պարտէզ Նոր-Նախիջևանի մէջ:

ԱՍԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ

Ինչպէս ցեղերը, այնպէս և նրանց լեզուները կարելի է բաժանել երկու տեսակի վրա՝ քաղաքակրթական և ոչ քաղաքակրթական ցեղեր և լեզուներ:

Կան լեզուներ, որոնք ընդունակ են անընդհատ զարգացման, քաղելով իրանց արմատներից, իրանց սեփական լեզուագիտական հարուստ աղբիւրից զարգացման անսպառելի նիւթերը: Այդ տեսակ լեզուները ամբոխի բերանից հեշտութեամբ անցնում են դէպի ընդհանուր հասարակական, գործնական լեզուն: Հետզհետէ զարգանալով քաղաքակրթական լեզուն սկսում է ծառայել որպէս լուսաւորութեան միջոց՝ նախ տարրական ուսումնարանում, յետոյ միջնակարգ դպրոցներում, վերջապէս զարգանալով ընդունակ է դառնում և բարձրագոյն գիտութեան գաղափարները արտայայտելու:

Ուրիշ կողմից կան լեզուներ, որոնցով թէև խօսում է մի ամբողջ ցեղը, կամ ազգը, բայց որոնք ընդունակ չեն բարձրանալ, զարգանալ տարրական ուսումնարանից բարձր: Այդ տեսակ լեզուն կենդանի է մնում, մինչև որ այն ցեղի, կամ ազգի մէջ մտնում է լուսաւորութիւնը, բայց հէնց որ մտաւ, տարածվեցաւ լուսաւորութիւնը, նա անընդունակ լինելով իր լեզուագիտական ձևերի և միջոցների աղքատութեան պատճառով արտայայտել որ և է վերացական գաղափար, սկսում է ընկնել, անհետանալ և տեղ տալ մի որ և է օտար լեզուին....

Անդրկովկասի և Փոքր-Ասիայի բոլոր բնիկ լեզուներից մեզ յայտնի է միմիայն մի լեզու որ կարող է անուանվել քաղաքակրթական լեզու՝ դա հայոց լեզուն է: Լուսաւորութեան տարածման հետ զուգընթաց կերպով զարգանում է, մշակվում է և հայոց լեզուն: Երէկ նա կարող էր միայն տարրական ուսման մտքերը արտայայտել, այսօր նա կարող է արդէն աւանդել միջնակարգ դպրոցի բոլոր առարկաները, վաղը նա կը կարողանայ գիտնական մտքերի տարածման յարմար գործիք դառնալ:

Բացի իր սեփական հարուստ աղբիւրներից, հայոց լեզուն ունի ընդունակութիւն իւրացնել, սեփականացնել և օտար արմատների տեխնիկական բառերը, մտցնել նրանց իր բառարանի մէջ և գործածական, հասկանալի, մատչելի, ժողովրդական անել նրանց....

Կան լեզուներ, ինչպէս օրինակ թուրքերէնը, օսերէնը, կամ քրդերէնը, որոնք թէ կուզ հազարաւոր ռամիկ, երկրագործ, արհեստաւոր ամբոխի բերանից լսէին, թէ կուզ ամբողջ ժողովուրդը նրանց խօսէր, երբէք չեն զարգանայ այն աստիճան որ կարելի լինի նրանցով ալգէբրա կամ տրիգօնօմէտրիա դաս տալ, կամ քաղաքական ամենաթեթև հեռագիր այդ լեզուով թարգմանել մի որ և է լրագրի մէջ:

Այդ տեսակ լեզուները, լուսաւորութեան նշոյլը երևալուն պէս, պէտք է կամ միանան մի այլ աւելի քաղաքակրթված լեզուի հետ, կամ պէտք է անհետանան և տեղ տան մի օտար, աւելի զարգացած լեզուին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

14 յունիսի

Այս տարվայ եղանակի վատութիւնը, անձրևների անընդհատ գալը, հեղեղները—որոնց տուած վնասները, արագութեամբ տարածվում են ժողովրդի մէջ, այդ բոլորը պատճառ են դառնում ժողովրդի մէջ զանազան անստոյգ լուրերի տարածվելուն:

Նրանք ասում են «Այս տարվայ անձրևները սովորականներից չեն, սա Աստուածանից մի պատուհաս է, մեր մեղքերը մեզ յիշեցնելու համար»: Այսպիսի ժամանակներում երբ ժողովրդի միտքը այդպիսի նախապաշարմունքներով լիքն է, մեր գիւղացիք որ աւելի սնոտիապաշտ և աւելի տգէտ են, պատմում են ժողովրդին այնպիսի լուրեր, որոնք կամ բոլորովին սուտ են և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ

—

Մանկական պարտէզ ասելով պէտք է հասկանալ այնպիսի վարժատուն, ուր երեխաները (շատ փոքր հասակից, գրեթէ 4—5 տարեկանից մինչև 8—9) կը մեծանան, կը զարգանան մարմնով և հոգով այնպէս, ինչպէս որ բնութեան զաւակը կը մեծանայ. բնութեան ծոցի մէջ, ինչպէս որ մեր նախահայր-Ադամը և Եւան պէտք է ապրէին և երջանիկ կեանք անցնէին փափկութեան դրախտի մէջ: Ամեն աշխարհի և ամեն ազգի երեխայ սիրում է իր օրերը անցնել պարտէզի մէջ. նա իր բոլոր զուարճութիւնը գտնում է միայն պարտէզի մէջ՝ հովանի ծառերի տակ վազվզելով, սիզաւէտ մարգի վրա նստելով, նախշուն թիթեռնիկներ որսալով, թըթուաշ ելակներ քաղելով ու ուտելով, բազմաբուրեան և գեղեցիկ ծաղիկներ հոտոտելով: Ա՛ռ երեխայն և բնակեցրու ամենագեղեցիկ, ամենազարդարուն, ամենաշքեղ պալատի մէջ. կարճ միջոցում նրա սիրտը կը նեղանայ այնտեղ, բայց պարտէզէն նա երբէք չի ձանձրանալ: Ինչու: Պատճառը շատ պարզ և շատ հասկանալի է. Պարտէզը որ կայ՝ բնութեան ամենագեղեցիկ յօրինուածքն է, իսկ երեխան նոյն իսկ բնութեան փառքի թագն է, նրա թագի վրա ամենասիրուն և ամենաթանկագին գոհարն է: Նմանը նմանին սիրելու որ լինի՝ այդտեղ ինչ զարմանալու և ինչ չը հասկանալու բան կայ:

Ի՞նչ պէտք է անէ երեխան մանկական պարտէզի մէջ: — Նա ամբողջ օրը բաց և առողջ օդի մէջ, (ի հարկէ, այդ կը լինի գարնան, և ամառվայ ու աշնան տաք օրերը, իսկ ձմեռը և պղտոր եղանակներին՝ մաքրաօդ սենեակների մէջ) անմեղ պէտք է խաղայ և ինքն իրան ձանձրոյթ և պարտասութիւն չը պատճառած՝ պէտք է աշխատի և սովորի: — Ի՞նչ պէտք է սովորի: — Այն ինչ որ նրան այսօր, վաղը, մէկ ամսից, և միանգամայն ինչ որ նրա բոլոր կեանքի ընթացքում պէտք կը գայ: Մանկական պարտէզի մէջ երեխան պէտք է սովորէ այն բաները, որ կան նրա չորս կողմը—օդը ջուրը, հողը, քարերը, բոյսը, թռչունները և նրանց տուած օգուտն ու վնասը, քամին, անձրևը և նրանց տուած օգուտը և երբեմն վնասը և այլն, և այլն. մի խօսքով այն ամեն բաները, որոնց իմանալը կասուի գիտութիւն և որոնց չիմանալը կասուի տգիտութիւն:

Երեխան հետաքրքիր է. նա ամեն բան կուզէ ճանաչել, ամեն բան քննել, ամեն երևոյթ հասկանալ, ամեն գործողութեան պատճառը իմանալ. նա իր մօրը մի րոպէ հանգիստ ու դադար չի տալ,—«ինչո՞ւ ամպը կը քալէ, ինչո՞ւ լուսինը գիշերը կը փայլի ու ցերեկը ճառագայթն արևի ժամանակ հազիւ կը նշմարվի, ինչո՞ւ աւազի վրա բոյսը չի աճիլ, ինչո՞ւ ջրհորի ջուրը աղի է, ինչո՞ւ սոխակը միայն գարնան ժամանակ կերգէ, ինչո՞ւ ձմեռը թռչուններ չը կան...» Վա՜յ այն խեղճ երեխային, որի անթիւ անհամար հարցմունքները կամ անբաւարար պատասխանի կը մնան կամ ձախ ու ծուռ մեկնութիւն կը ստանան: Հաւատացէք, ազգը, այդ կերպով, ամեն տարի կը կորցնէ հարիւրաւոր և հազարաւոր Բիսմարկներ, Բիկոնսֆիլդներ, Գամբէտտաներ, Ստեֆենսոններ, Այվազովսկիներ, Լօրիս-Մելիքովներ, Խրիմեան հայրիկներ, Խորէն Գալֆայեաններ... Շատ սակաւ մարդ տեսել եմ, որ ի խորոց սրտէ ախ քաշելով չասէ «ինչո՞ւ պապաս մամաս ինձի պզտիկութ ուսումի չը տուին, ես ուրիշ մարդ կըլլայի»: Այժմ ամենին յայտնի է, որ դաստիարակված տղան առաւել աջողութեամբ կը ստանայ կրթութիւն. իսկ չը դաստիարակվածի կրթութիւնը կամ շատ յամր առաջ կերթայ կամ բոլորովին անպտուղ կը մնայ: Մանկութեան օրերի ստացած տպաւորութիւնը ոչ միայն խոր, այլ անջնջելի կը մնայ մարդուս հոգու, սրտի և ուղեղի վրա: Մի հատիկ աջողակ կամ անաջող պատասխանից կախված է երեխայի ժամանակով, Բիսմարկ կամ քրէական յանցաւոր լինելը.... Ա՛խ լուսաւորեալ մայր, մեծ է քո ազդեցութիւնը ոչ միայն երեխայի, այլ և ամբողջ միլիոնաւոր ազգի վրա... բայց հայ ազգը շատ լուսաւորեալ մայրեր ունի արդեօք:

Ո՞վ կարող է ասել որ հայրը ու մայրը իրանց զաւակներին չեն սիրի. ոչ մի հրէշ չի համարձակվի այդ խօսքը արտասանել. մանաւանդ հայ կնոջ պարծանքը այն է, որ նա մի առանձին, հազուագիւտ սիրով կը սիրէ ու քնքոյշ զգացմունքով կը գուրգուրէ իր զաւակներին. բայց խնդիրը նրա մէջ է, թէ արդեօք ինչ արտայայտութիւն ունի նրա այդպիսի սէրը:

Կայ մայր, որ իր սէրը կը յայտնէ զաւակին առաւօտից մինչև երեկոյ կիւլէնկի (քաղցրաւենի) ու եմիշ (միրգ) ուտեցնելով նրան: Այդպէս սէրը փրկաւէտ է արդեօք երեխայի համար:

Կայ մայր, որ իր սէրը կը յայտնէ զաւակին խումաճիքի (պաճուճապատանքի) պէս հագցնելով նրան: Օգտաւէտ է արդեօք զաւակին այդպիսի սէրը:

Կայ մայր, որ ոչ մի զբօսանքէ, ոչ մի խընջոյքէ, ոչ մի հացկերոյթէ, ոչ մի պարահանդէսէ, ոչ մի տօնավաճառէ, ոչ մի կառքով կամ սահնակով ճեմելէ (քաչամ) չի զրկիլ իր զաւակին: Ի՞նչ բարոյական օգուտ ունի այդպիսի սէրը նրա զաւակին:

Կայ մայր, որ իր կոկորդէն կը խլէ, ինքն իրան ամեն զրկանքի կենթարկէ և իր զաւակի ամեն մանր ու չնչին հաճոյքը կը կատարէ: Օգտաւէտ է արդեօք այդպիսի քնքշութիւնը զաւակի համար:

Շատ ուրիշ զոհեր ևս կան, սիրոյ շատ ուրիշ արտայայտութիւններ կան, որն կանէ մայրը իր զաւակին. և այդ ամենը, շատ անգամ, ոչ միայն օգտաւէտ չեն, այլ ընդհակառակն, չարաչար վնասակար են:

Ասմ, մայրեր, երեխայի պէտքը շատ չափաւոր է. ի զուր և անխոհեմութեամբ դուք նրա համար կանէք մեծամեծ ծախքեր և զարձեալ ի զուր կը գանգատէք աջ ու ձախ, որ երեխայ մեծացնելը շատ թանգ կը նստի ձեզ և ուժերէդ վեր է: Կը սխալիք դուք:

Երեխային պէտք է մաքուր օդ, անդուլ և կանոնաւոր շարժմունք, անզարդ կերակուր (որքան աժան և անպաճոյճ՝ այնքան լաւ), անդորր քուն, աստիճանաբար մտաւոր զարգացումն, անսեթևեթ հագուստ և խոհեմ ու անդուլ խրատ և հովանաւորութիւն մօր: Ինչ որ դրանցից աւելի է, այն սպանիչ թոյն է երեխայի համար:

Ինչու մեր ազգը լուսաւորութեան մէջ յետամնաց է: Դրա մի հատիկ պատճառը այն է, որ մեր երեխաները դաստիարակութիւն չունին: Իսկ երեխայի դաստիարակողն է լուսաւորված մայրը:

Մանկական Պարտէզն է բազմութիւն երեխաների լուսաւորված մայր:

Այս ասածներէս յետոյ, կարծեմ, արդէն ամենին պարզ և հասկանալի է Մանկական Պարտէզի նպատակը և ուղղութիւնը:

Այն դրութեան մէջ, որ կայ ներկայ րոպէիս Նոր-Նախիջևանը, Մանկական Պարտէզը մի հատիկ հնարն ու միջոցն է՝ նրա գալոց սերնդին հասցնելու նիւթական և բարոյական բարիքի: Sapienti sat.

Պատկանեան

կամ այդ լուրերը հաղորդվում են չափազանց մեծացրած կերպով։

Աչէքանդրօպոլից եկած սայլապաններ պատմած էին այստեղ մի լուր, որի պարունակութիւնը սա էր։

Ճանապարհին մի դեռահասակ կին հանելով դրանց սայլերին սկսում է աղաչել նրանց, որ վեր առնեն նրան սայլի վրա և թագցնեն, որովհետև մի քանի ձիաւոր իր ետևից են ընկել և հալածում են։ Սայլապանները վերառան աղջկան, դրին մի ջուալի մէջ, ջուալի բերանը կապեցին, դրին սայլի վրա և շարունակեցին իրանց ճանապարհը։ Հազիւ թէ մի քիչ հեռացել էին որ երեք ձիաւոր հասան նրանց և սկսեցին հարցնել թէ չէք տեսել արդեօք մի այդպիսի կնամարդ։ Սայլապանները բացասական պատասխան տուին և ձիաւորները շարունակեցին իրանց ճանապարհը դէպի առաջ աղջկան որոնելու համար։ Ձիաւորների հեռանալուց յետոյ աղջկան դուրս են հանում այդ պատահական բանտից։

Նա սկսում է խօսել սայլապանների հետ այսպէս։ «Այդ ձիաւորները հրեշտակներ էին որ Աստուած ուղարկել է աշխարհ, յիշեցնելու ձեր արած մեղքերը, որոնք չարժել են Աստուծու բարկութիւնը և եթէ չը զղջաք քարէ կարկուտ կը գայ» և այլն և այլն։ Երկար ճառախօսութենից յետոյ աղջիկը խնդրում է կրկնել մի և նոյնը,—իրան դնել ջուալի մէջ։ Նրա խնդիրը կատարում են, բայց մի քանի ժամանակից յետոյ, որ բաց են անում ջուալը նրա մէջ ոչ ոքի չեն գտնում։ Այդ պատահմունքը պատճառ է տուել հաւատալու թէ արդարև այդ ձիաւորները հրեշտակներ են եղել, իսկ աներևոյթացող աղջիկը մի սրբուհի։ Ինչ և իցէ, բայց բանը նրանում է, որ այդ լուրերին հաւատացողներ կան և ի զուր կը լինէին ձեր խօսքերը եթէ դուք կամենայիք ուրիշ կերպով հասկացնել նրանց այդ պատահմունքի ինչ տեսակ և որքան ճշմարիտ լինելը։

Անցեալ օր լճի վրա թաթար էր տեսնվում։

Մեր հասարակ ժողովուրդը իսկապէս չը գիտենալով դրա ինչից և ինչպէս գոյանալը «վիշապ» է անուանում դրան։

Շատ հաւանական է որ դրա օձանման երևոյթը պատճառ է տուել այդպէս անուանելու, բայց ես կարծում եմ որ դա առաջացած է մի այլ պատճառից։ Ցայտնի է որ մեր հին «կարդացողները» կարդում էին համարեա միայն կրօնական պարունակութեամբ գրքեր։ Յովհաննու յայտնութեան գրքի մէջ մենք կարդում ենք որպէս թէ աշխարհի վերջին մի ահագին գազան ցած պէտք է իջնէ երկիր և աւերէ աշխարհը։

Կարելի է ենթադրել թէ այդ «կարդացողներին» հարցրել են սրանց կարծիքը այդ երևոյթի մասին, նրանք էլ իսկութիւնը չը գիտենալով, ժողովրդի հետաքրքրութիւնը յագեցրել են «վիշապ» անուանելով։

Ուրիշ մարդիկ պատմում են թաթարի մասին թէ դա մի ահագին վիշապ է, որին հրեշտակները երկնքից շղթաներով ցած են իջեցնում մարդկանց մեղքերը յիշեցնելու համար։ Հրեշտակները չեն թողնում նրան մինչև գետին հասնելու (աշխարհի վերջին թոյլ կը տան միայն գետին հասնելու) եթէ թողնեն կուլ կը տայ բոլոր աշխարհը։

Այսպէս և սրա նման ծուռ և օտարոտի գաղափարներ շատ կան մեր ժողովրդի մէջ։ Այստեղի ուսումնարանում պարոն Բ. Պիճիկեանցը դասաւանդութիւն է անում բնական պատմութենից, յուսանք որ բնական պատմութեան գոնէ սկզբնական դասաւանդութիւնը վերջ կը դնէ ապագայում այդ նախապաշարմունքներին։

Բայց գիւղերը։ Քանի որ գիւղերի մէջ կանոնաւոր ուսումնարաններ չը կան, նրանք կը մնան մի և նոյն տգիտութեան մէջ ինչպէս մինչև այժմ մնացել են, եթէ որ մի բարի պատահմունք չը դուրս բերէ նրանց, երկարատև թմբութենից։

Թ. Մառանկոզեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

12 յունիսի

Անցեալ սեպտեմբերի վերջի կէսից մինչև օրս, դուցէ և այսուհետև էլ, ձեր պատուական լրագրի միջոցով Շուշուց գրված շատ յօդուածներ են հրատակվել «Մ. Կ.» ստորագրութեամբ որոնք ուրիշ մի բան չեն, եթէ ոչ արժ. Արիստակէս հայր-սուրբի և մէկ քանի հոգաբարձուների դէմ զրպարտութիւններ, անիրաւ և սուտ դրածներ, որին արժ. հ. առաջին անգամը հերքեց, բայց այնուհետև մնաց լուռ և անտարբեր։ Բայց պ. յօդուածագիրը գրեց միշտ և գրում է, մինչև այն աստիճան, որ ամեն մտածողը հասկացաւ, որ այդ բոլորը կրքով գրված՝ անձնական շահերի արդիւնք են։

Շատ ցաւալի է, երբ ընդհանրութեան օգուտը մանաւորվում է։ Ատելի է նա՝ որ հասարակաց շահը իր անձնականին է զոհում, անիրաւ է այն մարդը, որ իր անձնական շահի համար միամիտ և խաղաղ ժողովրդի մէջ երկպառակութիւն և խռովութիւն է ձգում. այլ և տմարդի է նա, որ տեսնէ ճշմարտութիւնը դատապարտված և լռէ։

Ուստի ինձ պարտք եմ համարում, իբրև ականատես վկայ, Շուշու երկպառակութեան մասին երկու խօսք ասել, (որի պատճառը պ. յօդուածագիրը Արիստակէս վ. և մէկ քանի հոգաբարձուներին է համարում,) որպէս զի ճշմարտութիւնը ստութեան հետ չը փոխանակվի։

Անցեալ մարտի 3-ին պ. Վ. Բաբաջանեանցը մեր հոգևոր դպրոցի տեսուչ հրաւիրվեցաւ։ Երբ մտաւ դպրոցը, գրաւոր առաջարկեց հոգաբարձութեանը, որ դպրոցական դումարից 7000 ր. բաց թողնեն և ինքն էլ խոստացաւ դորանով Եւրոպայի համալսարաններում ուսում աւարտած ուսուցիչներ բերել, ուսումնարանը բարեկարգել, պրոգիմնազիայի ծրագիր մացնել, այնպէս որ այստեղից դուրս եկած աշակերտը կարողանայ ուղղակի մտնել գիմնազիայի հինգերորդ դասատունը։ Հոգաբարձութիւնը համաձայնեցաւ։ Պ. Բաբաջանեանը ուսումնարանում եղած ուսուցիչների մեծ մասն արձակեց. առանց քննութեան աշակերտներին արձակուրդը տուաւ մինչև օգոստոսի տասը։ Ինքը առատ ճանապարհածախս ստանալով՝ յունիս ամսին դիմեց Թիֆլիս, մտադիր լինելով հակառակ դէպքում գնալ և Ս. Պետերբուրգ՝ խոստացած ուսուցիչները բերելու։ Թիֆլիսից վերադարձաւ յուլիսի կէսին և բերած ուսուցիչներն էին՝—Գրիգոր Պապեան (Ներսիսեան դպրոցի աշակերտ), Արսէն Թօխմախեան, (պատկերահան), Ներսէս Շահլամեան, (Էջմիածնի ճեմարանի աշակերտ դուրս եկած աչքացաւի պատճառով)։

Սեպտեմբերի 3-ից դասաւանդութիւնները սկսվեցան։ Նոյն ամսի 21-ին Արիստակէս վ. Նուխուց վերադառնալով՝ տեսաւ պ. Բաբաջանեանի տուած յայտարարութեանը բոլորովին հակառակ ուսուցիչներ և բռնած ընթացքը—դասաւանդութեան ոճը—բոլորովին հակամանկավարժական և ընդդէմ Սինոդի հաստատած կանոնադրութեան, տեսաւ որ ուսումնարանը իր նպատակին չէ կարող հասնել ըստ խոստման տեսչի, և թէ ի զուր վատնվում է մինչև 8000 ռուբլի և մանուկների թանկագին ժամանակը։ Տեսչին ասաց թէ՝ «այդ բոլորը ձեր խոստմանը հակառակ է և ապագայում ապարդիւն պէտք է լինի»։ Բայց պ. Բ. գոչեց հրապարակաւ թէ՝ «այս վարդապետը իմ առաջադիմութեանս արգելք է լինում և քանի որ սա այստեղ է, ես ոչինչ չեմ կարող անել...» Հոգաբարձուները տեսչին ասացին թէ՝ դու աշխատիր գործդ առաջ տար, իսկ վարդապետը չի խառնվիլ։ Այնպէս էլ եղաւ։ Ա. վ. տեսչի հակամանկավարժական գլխաւոր կէտերը գրաւոր տուաւ հոգաբարձութեանը, որ ապագայ պատասխանատուութիւնը նրա վրա լինի, և ինքը ետ քաշվեցաւ։

Այնուհետև հոգաբարձուներից ոմանք իրանց յաճախ այցելութեամբը տեսան որ դպրոցի ջանքը չէ ծառայում այն նպատակին, ինչպէս տեսուչն էր խոստացել և դարձան վարդապետին, որ հոգայ այն մասին։ հոգացին և խորհեցին տեսչին արձակել։ Պ. Բ. այս իմանալով, գնում է ընկնում մի քանի ձայն ունեցող հոգաբարձուների մօտ, աղաչում է ասելով. «Աստուած սիրէք, աղաներ, եթէ տարիս չը լրացած ինձ արձակէք, այնուհետև ես էլ չեմ ընդունվիլ ոչ մի տեղ. ուստի թողէք, խնդրեմ, երբ տարին լրացաւ, ես իմ հրաժարականս կը տամ։ Հոգաբարձուները իբրև հայ երիտասարդի ցաւելով թոյլ են տալիս։ Այնուհետև պ. Բ. աշխատում է մէկ քանի հոգաբարձուների սիրտը գրաւել։ Տարին լրացաւ և հրաժարական չը կայ. դարձեալ խորհուրդ է, տեսչին արձակելու, բայց այս անգամ հոգաբարձուներից ոմանք հակառակվեցան ասելով։ «Այս մարդը դոկտոր է (?)... փիլիսոփայ է... տասս է ձեռից թողնել։» Այսպիսով հոգաբարձուները երկու բաժանվեցան—ոմանք տեսչին արձակող, ոմանք պաշտպանող։ Ահա Շուշու երկպառակութեան սկիզբը։

Երկպառակութիւնը օրից օր մեծացաւ. որովհետև պ. Բ. սկսաւ իր իմացած աշակերտներին գրքեր ընծայել, կեղծ ուսման վկայականներ տալ, առանց վ-ի գիտութեան մէկ քանիսին խոստանալ իր հաշուով բարձր ուսումնարան ուղարկել, և իր արձակման պատճառը վարդապետին համարելով, մտնել միամիտ և խաղաղ ժողովրդի մէջ, դրդել և ասել թէ՝ «Վարդապետը ուզում է ինձ արձակել, որ ինքը լինի տեսուչ... գլուխը վեր չառնում, որ ես լաւ եմ... չի ուզում որ ձեր երեխերքը լուսաւորեմ»։ Ուստի ժողովրդից ոմանք հաւատալով, սկսում են իրանք ևս խառնվել։

Վերջապէս պ. Բաբաջանեանը և իրանները տեսնելով, որ քանի Արիստակէս վ. քաղաքումն է և մէկ քանի հակացող անձինք հոգաբարձուներ են, իրանք չեն կարող անել մինչև վերջ իրանց կամարեալ հաւնձը (որովհետև սրանք հակառնում էին իրանց խարդախութիւնը) ամենայն հնարներ ի գործ դրին սուտ սուտ լուրեր գրելով թէ Ա. վ-ի դէմ և թէ այն հոգաբարձուների դէմ, որ առաջինին հոգևոր կառավարութեան առաջ ասելի անեն, և վերջինների համարումը ժողովրդի մէջ կորցնեն, նրանց անունները արատաւորեն, որ ժողովուրդը միւս անգամ նրանց հոգաբարձու չընտրէ (որովհետև նրանց ժամանակը անցեալ մայիսի 20-ին լրացած էր)։ Բայց պարոնների ջանքերը զուր անցան. որովհետև հոգևոր կառավարութիւնը իրան հաւատարիմն է ճանաչում և չուշեցիները իրանց բազմամեայ և բազմաչխատ հոգաբարձուներին։ Ընդհակառակն մայիսի 23-ին Հ. Կ. հրաման եկաւ և պ. Բ. տեսչութենից արձակվեցաւ։ Իրանները տեսնելով որ իրանց թերութիւնների պատրուակը վերացաւ, հարցաքննութիւնն էլ մօտ է, գուցէ խայտառակվեն «Առանց Բ. չենք կարող այստեղ մնալ» ասելով դուրս գնացին։

Այժմ թէ դպրոցում և թէ ժողովրդի մէջ խորին խաղաղութիւն է տիրում։ Օդի զովութեան պատճառով դասաւանդութիւնները դեռ շարունակվում են և դպրոցը կառավարում են մնացած տեղացի ուսուցիչները։ Ցայս ունենք որ հոգաբարձութիւնը փութով կը անօրինէ նոր ընդունակ տեսուչ բերել, որով և դպրոցը կը սառնայ օրինաւոր կերպարանք։

Գ. Ղ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գանձակ, յունիսի 9-ին

Գետաշէնի ձեր պատահական թղթակից—իմ անծանօթ բարեկամս «Մշակիդ» № 90-ի մէջ տպած յօդուածով՝ առիթ է տալիս ինձ իր նոր և անփորձ գրչից անգիտակցաբար դուրս թռած սխալների հետ ծանօթացնելու իրան։

Թղթակիցը խոստովանվում է ինքը՝ որ Գետաշէնի վարժապետ Ա. Տէր-Սարգսեանցը ծեծվել է։ Սրան կասկած չը կայ, որ վարժապետը յիրաւի ծեծվել է։

Ինչպէս երևում է, Գետաշէնի պ. թղթակիցը իր հայրենիքի լեռներու ետևն է ապրում, որ չէ ուզեցել նկատել իր հայրենակիցների-Գետաշէնի հասարակութեան կուսակցութիւնների բաժանված լինելը։

Միթէ սա կուսակցութիւն չէ, երբ մի քանի անձեր միացած՝ մէկին ընտրում են տանուտէր (իւզբաշի), որը արդէն յայտնի է լինում իր անցեալով։ Նստեցնում են փառաւորապէս գահի վրա, վզից կախում են մէդալիօնը և դատի գործերին ձեռք զարկում։ Մինչդեռ յանկարծ միւս կողմից, բոլոր գիւղը ոտի կանգնած, բարի նախանձով խիստ վառված, մի պրիստաւ էլ առաջն առած, մտնում են տանտիրոջ մօտ, զրկում են խեղճին իրաւունքից, ու վայր հանում փառաց գահից. տեղը նստեցնում խղճմտանքով, ու ազգի ցաւերին կարեկից գործող ու հմուտ մի անձ։

Եւ դարձեալ՝ միթէ այս մի կուսակցութիւն չէ ուսումնարանի դէմ լարված, երբ հասարակութիւնը մի քանի անգամ նկատելով ուսումնարանի աղետալի դրութիւնը՝ դիմել է Գանձակի ուսումնարանի տեսչին թէ բերանացի և թէ գրաւոր կերպով, պահանջելով ուսումնարանի վրա օրինաւոր խնամատարութիւն և հսկողութիւն ունենալ, և ազատել այդպէս անհոգ և բարձի թողի արած ուսումնարանը, փակվելուց։

Եւ վերջապէս, իմ գետաշէնցի բարեկամ, երևակայեցէք մի հասարակութեան յուսահատական վիճակը և նրա զզուանքը դէպի ուսումնարանը, թէ մինչև որ ծայրահեղութեան աստիճանին հասած պէտք է լինեն, երբ հարք և ծերք հասարակութեան բառբարելով հոգնելուց յետոյ՝ նոյն իսկ անմեղ մանուկների մէջն անգամ տրամադրվի մի սոսկալի զզուանք ուսումնարանի այդ տեսակ ներքին կեանքից.... Բայց թէ ինչ հետևանքներ են ունեցել այդ աղերսները՝ մեզ իսկապէս յայտնի չէ. միայն այսչափ շատ լաւ մտաբերում եմ, որ քանի անգամ պարոն տեսուչը այդ առիթով գնացել է գիւղը ժողովրդի յուզմունքը և խռովութիւնները հանդարտացնելու համար. ուր այս վերջին անգամներն էլ նշանակել էր կրկին մի տեսուչ, որ աւելի լաւ կարող լինի հակել ուսուցչի բոլոր գործողութիւններին։ Եւ այժմ էլ ինչպէս լսում եմ, Գետաշէնի հասարակութիւնը պատրաստվել է վերջին անգամ ներկայացնելու մի խնդիր ևս վիճակիս ուսումնարանների թեմական վերատեսչին այդ ուսումնարանի մասին, և եթէ չը ստանայ մի օրինաւոր բաւարարութիւն, մտադիր են իրանք անձամբ խնամելու ամեն տեսակ հոգսերը։ Բայց դեռ ևս մեծ յոյս ունեն, որ մեծապատիւ թեմական վերատեսուչը այս անգամ անշուշտ կազատէ ուսումնարանը իր անաչառ և անկողմնակալ խղճով անհոգ ձեռքերից։

Այս ամենից յետոյ, Գետաշէնի թղթակիցը ձեռքը կուրծքին դրած և իր խղճով զինված թող մտնէ ուսումնարանի դռնից ներս, և տեսնէ թէ, ուր են 5—6 տարվայ ընթացքում ուսանող աշակերտները, որոնք ամբողջ տարիներով իրանց անգին ժամանակը ուսումնարանի մէջ մաշելուց յետոյ՝ զրկված բարոյական զարգացումից, ցիրուցան են եղած աննպատակ 1)։

Պարոն ուսուցիչը, փոխանակ հրացանը ուսից կախված աշակերտներին իր հետ սար ու ձոր թափառելով՝ անմեղ թռչուններին կեանքից զրկելով պարապէր՝ աւելի լաւ կը լինէր, և իր խղճի դէմ գործած չէր լինի, եթէ խեղճ մանուկներին չը զրկէր իրանց թարմ և զուարթ ժամանակից։

Եթէ պարոն թղթակիցը ցանկանար մի տեսակ բարութիւն անել իր ընկեր ուսուցչին, սրա պատիւը վերականգնելու համար, ես խորհուրդ կը տայի նրան բարեկամաբար՝ լռել բոլորովին համրի պէս, և թողնել որ մոռացվի ամեն բան։

Թող թղթակիցը նկատէ, որ և է հասարակութեան մէջ պատահած յեղափոխութիւնը գործվում է, կամ նոյն իսկ հասարակութեան անմիջական միջամտութեամբ, և կամ նրա ներկայացուցիչների միջոցով։

Տիրացու լինելը չէ զրկում մարդուն հասարակութեան անդամ լինելուց. մարդիկ մի և նոյն հասարակութեան մէջ կարող են զանազան պաշտօններ ունենալ, մինը կարող է տիրացու լինել, միւսը ճողոպրների (ընկուզի կոճերի) վաճառական, և երրորդը որ և է նպատակին ծառայող մի մարդ և այլն, միով բանիւ հասարակութեան մէջ կեանք վարողը, թէկն լինի նա օտարաքաղաքացի, այնու ամենայնիւ հասարակութեան անդամ է յիշվում, և ունի իր ձայնը։

Վերջացնելով նամակս, կը խնդրէի ձեր թղթակցից պատասխանել հետևեալ հարցերին.—1) թէ որտեղ է կամենում ծածկել գետաշէնցիների երկու կողմերի խնդրագիրները, որոնք տուած են տանուտէրի վերաբերութեամբ։ 2) Ի՞նչ է պատճառը և ինչ հետևանքի հասաւ տեսչի անունով տուած աշակերտների խնդրագիրը։ 3) Ի՞նչ է պատճառը՝ ուսուցչի գործողութեան վրա առանձին վերակացու—կրկին տեսուչ նշանակելը թեմական վերատեսչի օգնականի կողմից։ 4) Ուսումնարանը տուած է արդեօք վարձով թէ ոչ, և ինչ է պատճառը։ 5) Եթէ ուսումնարանը այդպէս հակայաքայլ առաջ էր գնում, ինչն էր ստիպում ուսուցչին դրել թեմական վերատեսչի օգնականին, որ աշակերտները բոլորն էլ ցրված են։

Նիկողայոս Սուզանաճեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 13 յունիսի

Կարդալով «Մշակ» լրագրի թերթերում Արատեան ընկերութեան մասին, որը հաստատված է Կ. Պոլսում և որոշած լինելով մի գիշերօթիկ վարժարան բանալ Հայաստանի վանքաղաքում և այնտեղ վարժապետներ ևս պատրաստել Վասպուրական գիւղերի համար, աւելորդ չը համարեցի և ես որ և իցէ մէկ կերպով մասնակցելու այս ազգային գործին։

Ահա ուղարկում եմ ձեզ սրա հետ 24 ր. 25

1) Ինչպէս լսում եմ, ուսումնարանն էլ տուած է վարձով ամարանոց գնացողներին։

կ., որը հաւաքված է Թիֆլիսում ինչպէս արքունական ուսումնարանի աշակերտներից նոյնպէս և ուրիշ դասակարգի մարդկանցից։ Այս գումարից 10 ռուբլ հաւաքած է օրիորդ Երևանցեանը, և սրա հման վրա թէ ի միամտութիւն նրա և թէ նուիրատուների, խնդրում եմ ձեզ հրատարակել նրանց ազգանունները։ Նուիրատուների ազգանունները սրանք են։—Սիմէօն Գուլամիրեանց 1 ռուբլ, Զամոյեանց Յովհաննէս 20 կոպէկ. Մի գիմնազիստ 15 կ., Սիմէօն Պետրոսեանց 20 կ., Շամիր Մելիք-Փաշայեանց 10 կ., Սափարեանց 20 կ., Զինկարեան 20 կ., Աւէքսանդր Աւաչեանց 30 կ., Ոմն 10 կ., Ոմն 5 կ., Մելքումեանց 40 կ., Ն. Տէր-Մկրտչեանց 40 կ., Ոմն 15 կ., Ոմն 20 կ., Ոմն 10 կ., Պապինեանց 40 կ., Մեհրաբեանց 20 կ., Մանուէլեանց 1 ռուբլ, Գ. Մալամեանց 50 կոպէկ, Գիմնազիստ 10 կ., Մութաֆեանց 50 կ., Միրիմանեանց Գէորգ 1 ռուբլ, Ոմն 20 կոպէկ, Ոմն 20 կ., Հմայեակ 15 կ., Բիրադով 5 կ., Գ. Խաչատուրեանց 50 կ., Վարդապետեանց 40 կ., Ոմն 10 կ., Սարգիս Բէգջանեանց 50 կ. Ոմն 10 կ., Մի օտարական 1 ռուբլ, Մատթէոս Պողոսով 40 կոպէկ, Բարսեղ Տէր-Նիկողոսեանց 50 կ., Գաբչայեանց 20 կ., Ոմն 20 կ., Ոմն 20 կ. Ոմն 20 կ., Յարութիւն Բագարեանց 20 կ., Գոնդուրեանց 10 կ., Մամիկոն Մելիք-Յակովբեանց 50 կ., Գրիգոր Կիրակոսեանց 1 ռուբլ, Արտաշէս Գաբրիէլեանց 10 կոպէկ.—Միատեղ բոլորի գումարն է 14 ռ. 25 կ.։—Օրիորդ Ս. Երևանցեանի ժողովածը.—Պ. Ադամեանց 3 ռուբլ, Տիկին Սահաթոպղեանց 1 ռ., Ա. Միրիմանեանց 3 ռ., Ս. Վարձիգուլեանց 1 ռ., Ն. Նաղարեանց 1 ռ.,

Ս. Երևանցեանց 1 ռ.։—Ընդամենն է 24 ռ. 25 կ.։

Սիմէօն Գուլամիրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոսկվա, 10 յունիսի

Կարդալով ձեր լրագրի համարներում նուիրատուութիւնների մասին յօգուտ Վանի գիշերօթիկ վարժարանի, և լաւ գիտենալով, որ միայն ուսումն է զէնքը մեր եղբայրների վասն որոյ՝ սուրբ պարտք եմ համարում ցուցակներ պատրաստելու օտարազգութեան համար մեր այստեղի ազգակիցների մէջը, և յոյս ունեմ միջնորդեն այդ սուրբ նպատակին նմանապէս այլազգիներ, որովհետև շատ տարիներ է որ մեր կոծումն և լալը հասնում է այդ վերջինների ականջներին և միշտ հայերը գեղեցկացրել են իրանց անցեալ պատմութիւնները այդպիսով և ահա ապագան որով Եւրոպան դարձնում է մեծ ուշադրութիւն և պատրաստում է մեծ ապարէզ։

Բուզդան Արուշանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼՕԴՈՒՅ մեզ գրում են, որ Լօրու պրիստավը շատ վատ է վարվում հոգևորականների հետ։ Պատմում են, որ նրան զանգատով դիմել քահանաները չեն համարձակվում, գիտենալով, որ նրանց վրա պէտք է փողոցային յիշոցներ թափվեն։ Պրիստավը դաւանութիւնը փոխած, կաթոլիկութիւն ընդունած պարսիկ է։

—

ԹԷԼԱՒԻՒ մեզ գրում են. «յունիսի 13-ին այստեղի օրիորդաց ուսումնարանի վարչութիւնը տօնեց ուսումնարանի բացման տարեդարձը։ Այդ օրը մի քանի ճառեր կարդացին, իսկ զաւեշտի համար նոգաբարձուները կռուեցին ուսուցիչների հետ։

—

«Кавказъ» լրագրին հաղորդում են, որ այժմ ԹԻՖԼԻՍ հասան 200 չվեյցարացի ընտանիքների ներկայացուցիչներ, որոնք կամենում են բնակվել մեր երկրում և պարապել կաթնագործութեամբ։ Շվեցարացի ընտանիքների միայն ներկայացուցիչներն են Թիֆլիսում, միւսները իջել են Վլադիկավկաս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԷԱՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Թիւրքիայում գտնվող ամեն ազգեր կօնգրէսի հաւաքվելը լսելիս, իբրև թէ զանգակի ձայնով արթնանում են խոր քնից, իրանց իրաւունքները պաշտպանելու համար։ Հրէից ազգն էլ հանդէս է գուրս գալիս իր հաւատակիցների իրաւունքները պաշտպանելու համար Ռումինիայում և Սերբիայում։ Իսրայէլեան դաշնակցութեան (alliance Israelite) պատգամաւորները որոնք պահանջում են քաղաքական հաւասարութիւն հրէաների համար Ռումինիայում և Սերբիայում, դիմել են կօնգրէսի անդամներին, որոնցից համակրութեամբ ընդունվել են և իրանց պաշտպանութեան խոստումներ են տրվել։ «Times» լրագրին հաղորդում են Բերլինից յունիսի 16-ին որ հրէաների պատգամաւորները նոյն օր ընդունվել են լորդ Օդօ Ռըսսելից և պ. Բիւլովից։ Այս վերջինը, երևի թէ ասել է նրանց որ չը պէտք է արտօնութիւններ խնդրեն, այլ միայն իրանց իրաւունքների դորձադրութիւնը։

«Gevich Chronicle» լրագրում հրատարակված է մի նամակ որ պ. Լիսոնէլ Ռօչիլդ Լօնդօնից մայիսի 31-ին ուղարկել է լորդ Բիկօնսֆիլդին։ Պ. Ռօչիլդ այդ նամակով խնդրում է Բիկօնսֆիլդից որ իր բոլոր ոյժը գործադրի ամեն կրօնների հաւասար իրաւունք տրվելու համար այն երկիրներում որոնց դրութիւնը լաւացնելու համար հաւաքվում է կօնգրէսը։ Սերբիայում, գրում է պ. Ռօչիլդ, 1861 թուի հրովարտակի համեմատ, մի քանի բաներ կան որոնց առևտրով զբաղվելը երկրի ներքին կողմերում արգելված է հրէաներին, ինչպէս նաև անշարժ կալվածներ գնելը։ Ռումինիայում մանաւանդ հրէաները աւելի անգթօրէն հարստահարվում են և հալածվում։ Ռումինական կառավարութիւնը այն աստիճան ճնշում է հրէաների ազատութիւնը որ յատկապէս պայման դրած է իր առևտրական դաշնագիրների մէջ թէ այն երկրում որի հետ կապում են առևտրական պայմանները բնակվող հրէաների հետ պէտք է վարվել բացարձակապէս իբրև ռումինիացի հրէաների հետ։ Պ. Ռօչիլդ իր նամակի յետագրութեան մէջ աւելացնում է հետևեալները։ Այս նամակը գրվելուց յետոյ, հետևեալ տեղեկութիւնները հաւաքված են։ Սերբիայում հրէաներին դուրս են արել իրանց տներից։ Նրանց արգելվել է բնակվել բացի Բելգրադ քաղաքից, երկրի այլ տեղերում։ Ռումինիայում, մի քանի տարի է որ հրէաները այլ ևս իրաւունք չունեն գիւղերում հաստատվելու, հողեր գնելու դաւառներում կամ վարձելու, քաղաքների մէջ տուն գնելու, հասարակական ամբրդախօսութիւններին մասնակցելու, ծխախոտ շինելու կամ ծախելու և վերջապէս խմիչքներ ծախելու գիւղերում։ Հրէաների վրա աւելի բռնաւորական օրէնքներ դրված են քան թէ բայեաների վրա։ Բոլգարիայում, աւելացնում է նա, Թիւրքաց կառավարութեան ժամանակ, հրէաները հաւասար դրութեան մէջ էին ուրիշ բայեաների հետ. այժմ, հրէաներից շատերը զանազան կողմեր են փախած և վախենում են վերադառնալ իրանց հայրենի տունը որ մի գուցէ քրիստոնեայ բոլգարները վատ վարվեն իրանց հետ, ինչպէս վարվել են վերադարձողների հետ։

Պ. Ալգէրնօն Տիւրնօր այդ նամակին պատասխանել է հետևեալը լորդ Բիկօնսֆիլդի կողմից։ «Պարոն, լորդ Բիկօնսֆիլդ պատիւ ունեցաւ ստանալ ձեր նամակը արևելքի իսրայէլեան ժողովրդների վերաբերութեամբ և ինձանից խնդրում է յայտնել ձեզ թէ այդ հարցին ուշադրութիւն կը լինի ինչպէս որ արժանի է։»

ԻՏԱԼԻԱ

Պապի հիւանդութիւնը ծանրանում է և օրից օր աւելի վտանգաւոր է լինում։ Բժիշկները շատ են նեղանում, որովհետև ամառվայ շոգ ժամանակ Վատիկանում բնակվելը շատ վտանգաւոր է պապի առողջութեանը։ Բայց կաթոլիկ կրօնամոլների անհաշտ կուսակցութիւնը ամեն կերպով արգելք է լինում պապի հեռանալուն Վատիկանից և օդափոխութեամբ առողջանալուն։ Յունիսի 11-ին, պապը դարձեալ ուշքից ընկել է և կէս ժամ աւելի մնացել է այնպէս։ Դեսպանները իսկոյն կանչվել են Վատիկան ուր պապի դրութիւնը տեսնելով, շատ անհանգիստ են եղել։ Նոյն օր, հենց որ դուրս են գնացել Վատիկանից, ժողովի են հաւաքվել և որոշել են իմացում անել իրանց տէրութիւններին թէ Լեոն XIII ինչ վտանգի մէջ է գտնվում և թէ արգելում են նրան հետևել բժիշկների խորհրդին։ Հաւանական է թէ տէրութիւնները՝ որոնց հաճելի չի լինի նորից պարապ տեսնել Հռոմի աթոռը, կաշխատեն հարկ եղածը գործադրել, պապին ազատելու համար վտանգից։

Հռոմից գրում են «Independance Belge» լրագրին թէ կամենում են Իտալիայում օգուտ քաղել Բերլինի կօնգրէսից և հարց բարձրացնել այն իտալական նահանգների վերաբերութեամբ որոնք դեռ գտնվում են Աւստրիայի իշխանութեան տակ։ Բավէնում Կարլօ Ֆարինիի թաղման առիթով մի ներկայացում տրվել է թատրօնում ուր ներկայ են գտնվել կառավարութեան ներկայացուցիչները և մասնաւորապէս, մինիստր-նախագահ պ. Կայրօլին։ Ժողովուրդը պատուել է այդ երեւելի հայրենասէրին եռանդուն օվացիաներ անելով և մեծաւանդ բղաւելով «Կեցցէ՛ Տրիէստ, կեցցէ՛ Իտալիա։» Կարլօ Ֆարինի, այդ Բավենցի անուանի անձը, մեծ ծառայութիւններ արած է իր հայրենիքին իբրև մատենագիր, իբրև հայրենասէր և իբրև պետական մարդ։ Շատ աշխատած է Իտալիայի վերածնութեան գործի համար։

Հռոմում պատրաստվում են Ժան-Ժակ Ռուսսոյի դարեդարձի հանդէս կատարել այս օրերս։

Լամբերտինի կոմսուհու բացած դատը Կարդինալ Անտոնէլլիի եղբայրների դէմ ժառանգութեան պատճառով, դեռ շարունակվում է։ Կոմսուհին ապացուցանում է թէ ինքն Պիոս IX-ի քարտուղար Նշանաւոր Անտոնէլլի կարդինալի աղջիկն է։ «Daily News» լրագրին հեռագրով հաղորդում են Բերլինից թէ դայեակը, տիկին Ժէրվազի, խոստովանվել է հարցաքննութեան մէջ թէ կոմսուհին Անտոնէլլի սրբազանի աղջիկն է։

«Italie» լրագրում հրատարակված է այդ հարցաքննութեան մանրամասնութիւնը որի մէջ վերին աստիճանի գայթակղական բաներ կան այդ կրօնամոլ ձևացող և ազատականութեան սաստիկ թշնամի կարդինալի վերաբերութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բէյտերի ընկերութիւնը» հաղորդում է, որ Աւստրիան կարեց բանակցութիւնները Թիւրքիայի հետ բօսնիացի ապստամբների հայրենիք վերադառնալու հարցի վերաբերութեամբ։ Այդ հարցը Աւստրիան կօնգրէսում կը բարձրացնի։

—Անգլիական լրագիրների թղթակիցները հաղորդում են, որ Թիւրքաց գերիները, որոնք Ռումինիայումն են գտնվում, ռուսաց զօրքերի հսկողութեան են յանձնված։ Գերիներին չեն թողնի մինչև առանձին հրաման չը ստանան։

—Բերլինից յունիսի 18-ին հեռագրում են «Indépendance Belge» լրագրին հետևեալը։ «Կօնգրէսի երէկվայ նստում, իշխան Բիսմարկ մի երկար ճառ խօսեց կօնգրէսի աշխատութեան վերաբերութեամբ։ Այդ ճառը աջող տպաւորութիւն ունեցաւ։ Այսօր մտերմական առանձին խորհրդակցութիւն պէտք է լինի, Բոլգարիայի հարցի վերաբերութեամբ մի քանի տարբեր կարծիքները համաձայնեցնելու համար։»

—Սկուտարիից հաղորդում են յունիսի 18-ին թէ չէրնօգորցիների և Թիւրքերի մէջ եղած կռիւը նշանակութիւն չունէ ինչպէս ասում էին։ Մի փոքր կռիւ է պատահել մահմետական բնակիչների և չէրնօգորցիների մէջ Կրէնայի ներսերում, գինութիւն է սկսվել և որոնում են նախայարձակներին։

—«Polit. Corresp». լրագիրը հրատարակում է թէ չէրնօգորցիները մաքրել են մի քանի տեղեր Պոպովպոլժէյի մօտ։ Երևի թէ դրանով վերջացրել են իրանց վէճերը Թիւրքիայի հետ։

—Աւստրիայի պատգամաւորների ժողովում, յունիսի 17-ին, մինիստր նախագահից տեղեկութիւն հարցրել են դալմատների Թիւրքերից սպանվելու վերաբերութեամբ։ Մինիստր-նախագահը պատասխանել է թէ ստիպողական բանակցութիւններ սկված են արդէն և կատարեալ բաւականութիւն պահանջվում է Թիւրքիայից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 21 յունիսի (3 յուլիսի)։ Կօնգրէսի աշխատանքների մասին «Provinzial Corresp.» լրագրին գրում են հետևեալը. «Վերջնական կերպով ճանաչելով Ռումինիայի, Սերբիայի և Չէրնօգորիայի քաղաքական անկախութիւնը, կօնգրէսը ընդունեց նոյնպէս, որ անխախտ կարգ հաստատելու և Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ գործերի դրութիւնը ապահովացնելու համար, այդ երկիրների գրաւելը աւստրիական զօրքերով, համապատասխանում է Աւստրիայի և Եւրոպայի շահերին։ Թիւրքիայի ընդդիմադրութիւնը այդ վճռի դէմ չէ կարող արգելել նրա իրագործելուն։ Բեսարաբիան Ռուսաստանին վերադարձնելու հարցի առիթով, բացի այն հողի կտորը, որ գտնվում է Դունայի գետի բերանի մօտ այն պայմանով, որ Դօբրուջան տրվի Ռումինիային, կօնգրէսը նոյնպէս կատարեալ համաձայնութեան է հասել։ Այսպիսով խոշոր խնդիրներից մնում է միայն հայոց խնդիրը, բայց և այդ խնդրի վերաբերութեամբ համաձայնութիւնը իրապէս արդէն պատրաստված է։ Երևում է, որ կօնգրէսը բարեյաջող վերջի է հասնում։ Կայսր Վիլհելմի մասին տարածված լուրերի վերաբերութեամբ «Provin. Corresp.» լրագիրը ասում է, որ բոլոր լուրերը Կայսրի մոռացած ճանապարհորդութիւնների մասին, դեռ ևս տարաժամ են և դրանց պէտք չէ հաւատ ընծայել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունիսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 96 ռ. 25 կ., երրորդ 96 ռ., չորրորդ 96⅛ ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 241 ռ., երկրորդ 238 ռ. 75. կ., արևելեան 95 ռ., ոսկին 7 ռ. 91 կ., Բօրսայի դիսկօնտ 4½%։ Տրամադրութիւնը ամուր է։

ԿՐՕՆՇՏԱԴ, 20 յունիսի։ Այսօր մօտ ժամը մէկին կէսօրից յետոյ, հանդիսաւոր ժամասացութենից յետոյ կամաւոր նաւատորմի առաջին կրէյսէր «Halsatia» հնգվեցաս «Ռուսաստան» անունով և սորանից յետոյ կրէյսերի վրա բարձրացրած է ռուսաց դրօշակը։ Այդ ժամանակ երաժշտութիւնը ի պատիւ դրօշակի ածում էր ազգային հիմն և շարունակվում էին եկեղեցական մաղթանքները և երդեցողութիւնը։ Դրօշակը, շքեղնաւը և շքեղնաւի հրամանատարը օրհնութիւն ստացան սուրբ ջրով։ «Ռուսաստան» նաւի ծառայողները նստեցին նաւի վրա նախընթաց օրը։ Եկեղեցական մաղթանքների վերջանալուց յետոյ, «Halsatia» անունը նաւի վրայից ջնջվեցաւ։ Հանդիսին ներկայ էին Կրօնշտադի նաւահանգստի հրամանատարը, գիներալ Կազակեվիչ, նրա ամուսինը և շատերը բարձրաստիճան անձինքներից։

ԼՕՆԴՕՆ, 21 յունիսի (3 յուլիսի)։ Կ. Պոլսից հաղորդում են որ Թիւրքաց գիլիգատներից Բերլինում ստացած հրահանգներին համեմատ, Բ. Դուռը համաձայնվում է որ աւստրիական զօրքերը գրաւեն Բօսնիա և Հերցեգովինա նահանգները, այն պայմանով, որ գրաւելու ժամանակամիջոցը և սահմանները նախապէս որոշվին։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱԶԷՅԱ գինուորականների չորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ չորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) $1^1/_4$ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՑԻՏՐԱԴ մագնեզի $1^1/_2$ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մանճակալներ 5 ր. և բարձր, աղցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւժինը 3 ր., ԳՐԻՉՆԵՐ արգը 15 կ. և բարձր, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԳԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծա՛կոցներ, մակենտօշներ, երեխաների չորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօսներ 10 կ. և բարձր, ռօմ, կօնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի $1^1/_2$ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ. և բարձր։ Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը։

5—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՕԼԵԱՆ հեղուկ և փօշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ $1^1/_2$ ր., ԽԻՆԱՅԻ ԻՒՂ $1^1/_4$ ր., ցեղրատ մագնեզիայի 2 ր., ՌՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԷՐԷՍ և անգլիական օղի $1^1/_2$ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., թէյի գդալներ (չեն սևանում) $1^1/_2$ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական չորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կոտս 10 ր. և բարձր, տրիկօ 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամազէի 1 ր. արշինը, շղթաներ (Աբիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.։ Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի դեղ, և այլն։

13—20

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ)

ստացվել են մեծ քանակութեամբ աշխարհագրական պիտոյքներ՝

ա. Հասարակ երկրագունտներ զանազան մեծութեան 50 կ. մինչև 3 ր. 50 կ.

բ. Երկրագունտներ պղնձեայ կիսամիջօրէականով . . 1 ր. 20 կ. — 5 ր. 50 կ.

գ. Երկրագ. պղնձեայ ամբողջ միջօրէականով, հաստրակածով և կողմնացոյցով . . . . 9 ր. — 20 ր. և աւելի

դ. Տէլլարի (երկիր և նորա շրջ. արեգակի շուրջ). 18 ր. և աւելի

ե. Աշխարհագրակ. ատլասներ . . . . 55 կ. — 5 ր.

զ. Մայր ցամաքների և Կովկասի քարտէզներ քաթանի վրա կպցրած և առանց դրան, պատմական, նրկարչական, կենդանաբանական և բուսաբանական ատլասներ, ձեռնարկներ, դասագրքեր և այլն։ Պատուէրները կատարվում են ճիշդ և արագ։

Շուշիի հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը հարկ է համարում հրաւիրել տեսչութեան և առարկաների ուսուցչութեան ցանկացողներին յայտնել շուտով իրանց յօժարութիւնը և պայմանները, Առարկաներն են—մատեմատիկայ, գծագրութիւն, ֆրանսիական լեզու, բնական, ընդհանուր և հայ պատմութիւններ, աշխարհագրութիւն և հայոց լեզու։ Բացի հոգաբարձութեանս այս պաշտօնական հրաւէրն, նա յայտնում է, որ յանձնել է նա և իր նախագահին գրագրութիւններ անելու յայտնի անձանց հետ, և այդ գրագրութիւններն պէտք է համարել ի դիմաց հոգաբարձութեան, և նրա առաջարկած պայմանները լինելու են հոգաբարձութեան նախընթաց հաւանութենով։

Անդամ հոգաբարձութեան Հ. Սարուխանբէկեանց։

Ալէքսանդրապօլու հայոց վիճակային հոգևոր և Արղութեան օրիորդաց ուսումնարաններում հարկաւոր են ուսուցիչներ յետագայ առարկաների համար. 1, ռուսաց լեզուի (երկու ուսուցիչ) 2, հայոց լեզուի (երկու ուսուցիչ) 3, Պատմութեան և Աշխարհագրութեան. 4, բնական գիտութեանց (սկզբունք) 5, Մատեմատիկայի (թւաբանութիւն, երկրաչափութիւն և սկզբունք ալգեբրայի) և 6, Արղութեան ուսումնարանի համար մի վարժուհի ձեռագործութեան նոյն և վերակացուհի։ Իւրաքանչիւր ուսուցիչ կունենայ շաբաթական մինչև 24 դաս։

Գրեթէ բոլոր առարկաների դասատուութիւնը պէտք է լինի երկուքին ուսումնարանների բարձր դասատներում։ (Տղայոց ուսումնարանը բացի պատրաստականներից՝ ունի չորս դասատուն, իսկ օրիորդացը—երկու. մասդրութիւն կայ բանալ և երրորդը)։ Դասատուութիւնները պէտք է սկսվին անշուշտ օգոստոսի 15-ին։

Ցանկացող ուսուցիչներից կը խնդրվի առանց ուշացնելու յայտնել իրանց պայմանները հետևեալ հասցէով.—Александрополь. Попечительству Армянскаго Духовнаго (или Аргутинскаго Дѣвичьяго) Училища.

1—6

Ծախվում են ձեռնտու պայմաններով ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶՈՒՄ գրաւ դրած ԵՐԿՈՒ ՏՆԵՐ, որոնցից մէկը երկու յարկանի է, իսկ միւսը մի յարկանի պտղատու այգիով մինչև Կուր գետը։ Տները պատկանում են գնդապետ Վրուբլեվսկուն և գտնվում են Կուկիա, Միխայիլովսկայա փողոց №№ 196 և 198։ Հողը 2750 քառ. սաժէն է, եկամուտը տարեկան 2000 ր. աւելի։ Գնի և պայմանների մասին կարելի է տեղեկանալ Անդրկովկասեան Պրիկազում, ատրիճանաւոր Զիալովից։

1—3

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ԿԻՐ կարելի է ստանալ ամեն ժամանակ Կուկիայում, Նիկոլաեվսկի փողոցի վրա Վ. Լ. Պատկովի և ընկ. սպիրտի պահեստին կից։ Տուն № 44։

2—3

Մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ-ՔԱՀԱՆԱՅ, որ իր ուսումը ստացել է Ներսիսեան Դպրոցում, ուր և ունի ուսուցչի պաշտօն, գնալով ամառանոց ԿՕՋՕՐ՝ ԿԸ ՏԱՅ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ. ցանկացողները կարող են հարցնել Կօջօրի հայոց եկեղեցու սենեակներում։

3—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

ՅՈՒՆԻՍԻ 23. Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունիսի 22-ին)	ր.	կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրիշնի 5%/₀ առաջին փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ամէ 112 գլ.	121	—
Դուբեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	10
» միւս տեսակը.	7	80
» չաքարաւազը .	6	20
» տրանզիտը. .	6	50
» մաքուր վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուշի . . .	8	—
» Թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	—	90
Մոմը բնաճարպի (стеар.)	13	20
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիգոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիվանի . . .	22	—
» մարտինիկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ	ր.	կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. Ա-նօվ։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3. 92	2. 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղից ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչաբեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտօվ կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրօնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակստ վեներական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտօվ մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչաբեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Ն. ԱԳՈՒԼԻՍ. Ա. Թ. Նամակը չենք տպի։ Չը գիտենք ինչ յարաբերութիւն ունեն միմիանց հետ Մուխտար-փաշան և Վ. Ագուլիսի կամուրջը, կամ քուրդերի բարբարոսութիւնը և օրիորդաց դպրոցը։

—ՆՈՒԽԻ. Տեղացի ոմն. Ձեր նամակի նիւթը վատ չէ, բայց ձեր լօգիկան երեխայական է։ Բաւական չէ, որ մի հարց բարձրացնէք, պէտք է իմանաք և գրել։

—ԳԱՆՁԱԿ. Գ. Ք. Բ. Ստացանք պ. Զ. Ե.-ից 47 րուբլ «Մշակի» բաժանորդագներ.

—ԹԻՖԼԻՍ. Կ. Տ. Ինչ արած. մեր օրիորդները մեծ մասամբ անհաստատամիտ են։ Այդ հանգամանքը կրթութեան պակասութենից է, այն ու ամենայնիւ այդ հարցի առիթով չարժէ երկար յօդուած տպել։

Дозволено Цензурою 22 Іюня Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ